№ 50 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 7 — 1902 — ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 7 № 50

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ստեղծեցէք յարմարութիւններ. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Երկրաշարժից վնասվածների օգտին. Նամակ Շուշուց. Նամակ Ախալքալաքից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մ. Բրօսսէ։

ՍՏԵՂԾԵՑԷՔ ՅԱՐՄԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Զը նայելով այն հանգամանքին, որ մեր երկրի հանքային ջրերը ունեն բուժական անուրանալի մեծ արժանաւորութիւններ, այնու ամենայնիւ նրանք մինչև այժմ չեն գրաւում յաճախորդների այնպիսի թիւ, որ սպասելի էր։ Թէ Հիւսիսային Կովկասի հանքային ջրերը, թէ Բօրժոմը և թէ Ա-բասթումանը իրանց ջրերով և շրջապատող բնութեամբ իրաւունք ունեն պահանջելու, որ հիւանդների մի մեծ թիւ, որ մինչև այժմ արտասահման է գնում բժշկվելու, գայ այդ ջրերը։ Եւ սակայն մի հանգամանք մինչև այժմ մեծ արգելք է հանդիսացել մեր հանքային ջրերի կեանքի զարգացման։ Դա այն մի շարք անյարմարութիւններն են, որոնք մինչև այժմ գոյութիւն են պահպանում այդ շրջաններում և դժուարութիւններ են պատճառում հիւանդներին և միւս յաճախորդներին։

Հիւսիսային Կովկասի հանքային ջրերի վարչութեան դիրեկտոր Խվոլչինսկիյ մի յատուկ զեկուցման մէջ, որ կարդաց փետրվարի 26-ին Պետերբուրգի ժողովրդական առողջապահութեան ընկերութեան մէջ, խոստովանեց, որ հանքային ջրերը ունեն դեռ շատ պակասութիւններ, և յայտնեց, որ այժմ ձեռնարկված են մի շարք միջոցներ՝ ստեղծելու յարմարութիւններ այդ շրջանում։ Կառուցվում են երեք ընդարձակ հիւրանոցներ, բարեւոքվում են լողարանները և մոցնվում են ուրիշ բարեկարգութիւններ, որպէսզի յաճախորդները կարողանան աւելի լաւ օգտվել ջրերից և ունենան կեանքի յարմարութիւններ։

Մեր երկրի շատ մասերում կան հանքային ջրեր, և մենք կարող էինք մեր երկրը պատել բուժարանների մի խիտ ցանցով, բայց մեզ պակասում է շինարարական ընդունակութիւնը։ Նոյն-իսկ մեր ամարանոցներում մենք չենք նկատում, որ հոգ տանէին կեանքի յարմարութիւնների վրա, շինէին ծառուղիներ, ճեմելիքներ, ստեղծէին ապրուստի մի շարք դիւրութիւններ։ Այդ պատճառով մեր երկրի հրաշալի տեղերից շատերը մնում են առանց ուշադրութեան, և ոչ ոք չէ փոտահանում միայն բնութեան հրաշալիքների համար զոհել կեանքի միւս յարմարութիւնները, որոնց նա սովոր է։

Անկասկած, պետութիւնը կարող է նպաստել բարւոքելու այս և այն տեղի կենսական պայմանները, սակայն չէ կարելի յոյս դնել այդ նպաստի ընդարձակ գործադրութեան վրա ամեն մի անկիւնում։ Այդտեղ պէտք է սկսի երևան գալ տեղական ինքնագործութիւնը և կուլտուրական ոյժը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Երկրաշարժից վնասվածների օգտին ստացանք հետեւեալ նուիրատուութիւնները.

Թիֆլիսում՝ տ. Թալար Տէր-Ղազարեանից 5 ռուբլի։

Աստրախանից, Մ. Էլդարեանից, 703 ռուբլի, որ նուիրել են հետեւեալ անձինք.

Տիկ. Վ. Լիսանովեան 50 ռ., տ.տ. Թ. Մ. եւ օր. Ս. Մազանդարանցեաններ 30 ռ., տ.տ. Մ. Էլդարեան, Ց. Սունդուկեան, Կ. Ակիմեան եւ Կ. Ջանումեան 25-ական ռուբլի, տ. Կ. Սերբրակեան 20 ռ., տ.տ. Մ. Ստեփանեան, Ս. Մելիքէնցեան, Ծ. Կիրէյեան, Մ. Եաղուբեան, Հ. Սահակեանեան եւ տիկնայք Էղեաններ 15-ական ռուբլի, տ.տ. Ս. Ֆրանգուլեան, Ա. Թէլէթեան, Ե. Բօրոտինեան, Ս. Մասումեան, Գ. Կիտայեան, Ե. Աղամջանեան, Կ. Կազաչկեան, N.N., Մ. Մուրադեան, օր. օր. Մ. Սարգսեան, եւ Մարգ. Սարգսեան 10-ական ռուբլի, տ. Կ. Բայեան 8 ռ., տ. Թ. Մեհրաբեան 6 ռ. տ.տ. Ե. Փանեան, Ե. Տէր-Ստեփանեան, Ս. Մկրտումեան, Կ. Պօպովեան, Գ. Էդիլխանեան, Ս. Էզեան, Անյայտ, Ե. Տուրփայեան, Ե. Վօսկրեսենսկայեա, Վ. Կալէյեան, Հ. Աւագեան, Մ. Ֆարմանեան, Կ. Ֆարմանեան, Ո. Իվանեան, Ե. Կոտելնիկեան, Ս. Բաբայեան, Ս. Սաֆարեան, Մ. Բախրեան, Ս. Սագիրեան, Ե. Մազանդարանցեան, Ա. Զիրկովա, Ա. Պօպովեան, Ման. Փարեմուզեան, Ե. Համազասեան, Ծ. Կիրէյեան, Վ. Լազարեան, Մ. Զերքեզեան, Ա. Կազբինցեան, Ե. Խաչատրեան, Մ. Փանոսեան, Ս. Զախարեան, Ման. Եաղուբեան, Հ. Դուլգարեան. Մար. Փարեմուզեան, Մ. Աւագեան, Ուզլեան քոյրեր, Ս. Խալաթեան, Ե. Թէլէթեան, Հ. Առստամեան, Կ. Իսայեան, օր. օր. Մ. Էլդարեան, Մ. Զիմշիտեան, Մ. Ցարուբիանեան եւ Ս. Արզանդուլեան 5-ական ռուբլի, տ.տ. Գ. Պօպովեան, Հ. Մազանդարանցեան, Մ. Քալանթարեան, Անյայտ, Մ. Էզեան, Ե. Մալաֆէյեան, Ա. Ասլանեան, Ե. Ասլանեան, Ռ. Եաղուբեան, Մ. Աղաբաբեան, Գ. Արտեմեան, Ե. Ֆաբրիկանտեան, Մ. Ամուրեան, Կ. Մելքումեան, Կ. Արզումանեան, Ե. Լիսիցեան, Զ. Ֆաբրիկանտեան, Շ. Սօլոմոնեան, Մ. Բուդաղեան 3-ական ռուբլի. տ.տ. Մ. Ֆաբրիկանտեան, Վ. Վարդանեան, Անյայտ, Հ. Մեսնիկեան, Ծ. Ստեփանեան, Հ. Միքայէլեան, Կ. Քալանթարեան, Ս. Սուրաբէկեան եւ օր. Մ. Վարագեան 2-ական ռուբլի։ Գումարն է 703 ռուբլի։

Կրասնովոդսկից.—Մ. Մինասեանից, 2 ռուբլի։

Ընդամենը 710 ռ. իսկ նախկին ստացվածների հետ միասին 5986 ռ. 57 կ.։

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Փետրվարի 24-ին

«Փետրվարի 22-ին բէալական դպրոցի վարչութիւնը տպագրած հրաւիրատոմսերով ահագին բազմութիւն էր հրաւիրել պ. Ն. Խանդամիրեանի թատրոնական դահլիճը՝ ներկայ լինելու գրական-երաժշտական առաւօտին, որ նուիրված էր ռուս յայտնի կրող Գոգոլի յիշատակին։ Առաւօտեան ժամը 12-ին դահլիճը լի էր բազմութեամբ։ Հանդէսին ներկայ էր եւ թեմական առաջնորդ Գառնակերեան եպիսկոպոսը եւ տեսուչ Բենիկ վարդապետը։ Թեմական եւ օրիորդաց դպրոցների բարձր դասարանների աշակերտների որոշ թիւ էր հրաւիրված։ Վարագոյրը բացվեց ժողովրդական հիմնով։ VII-րդ դասարանի աշակերտ Փիրումեան կարդաց Գոգոլի կենսագրութիւնը, իսկ նոյն դասարանի աշակերտ Տէր-Դաւթեան—Գոգոլի նշանակութիւնը ռուսաց գրականութեան մէջ. VII-րդ դասարանի աշակերտ Զագուրսկի, բուռն զգացմունքով, բերանացի կարդաց «Դնէպրը», իսկ IV դասարանի աշակերտ Զէպիզօ գեղեցիկ կերպով բերանացի կարդաց «Тройка»։ Ընդմիջումներով երգում էր աշակերտական երգեցիկ խումբը եւ աշակերտական երաժշտական նուագախումբը։ Երգեցիկ խումբը երգում էր բաւական ներդաշնակ կերպով, որի համար էլ իւրաքանչիւր երգ բուռն ծափահարութեամբ էր ընդունում հասարակութիւնը, իսկ նուագախումբը թոյլ էր։ Հանդէսի վերջում պ. Զէպիզօ խնդրեց հանդիսականներին ներկայ գտնվել եւ Գոգոլի յիշատակին նուիրված երեկոյթին, որ տեղի պիտի ունենար շաբաթ, փետրվարի 23-ին, թատրոնական դահլիճում։

Փետրվարի 23-ին կայացաւ երեկոյթը։ Խաղում էին Գոգոլի «Женитьба» երկու գործողութեամբ կոմէդիան եւ մի ուրիշ կտոր՝ «Какъ поссорились Ив. Ив. съ Ив. Никифоровичемъ»։ Ներկայացումը սպասածից այնքան աջող անցաւ, որ մարդ չէր կարող երեւակայել, թէ աշակերտներ են խաղում եւ ոչ թէ կարգին դերասաններ։ Մինչեւ անգամ եթէ մեզ վաղօրօք յայտնի չը լինէր, թէ կանանց դերերը տղաները պիտի կատարեն, այդ երեկոյ նրանց կանանց տեղ կընդունէինք, այնքան բնական էին նրանց ձայնը եւ ձեւերը։ Միջնորդ կնոջ դերում դուրս էր եկել IV-րդ դասարանի աշակերտ Վերեօվկին, որը հասարակութեան ուղղակի զարմացրեց։ Տղաների մէջ ֆուրօր արաւ VI-րդ դասարանի աշակերտ Միրզոեվ։ Մնացած բոլոր մասնակցողները իրանց դերերումն էին։ Այդ կատարեալ աջողութիւնը պէտք է վերագրել դպրոցի ուսուցիչ պ. Բէլօսլաւցեվին, որը մի ամբողջ ամավայ ընթացքում պատրաստել եւ սովորեցրել էր խաղալու ձեւերը, իսկ այդ երեկոյեան յուշարարի դեր էր կատարում, որի համար բեմ կանչվեց։ Ներկայացումից յետոյ սկսվեցին պարերը, իսկ ընդմիջումներով կենդանի պատկերներ, որոնք Գոգոլի ստեղծած տիպերի մի շարքն էին ներկայացնում։ Պարերը վերջացան 2½ ժամին։

Այսօր, փետրվարի 24-ին, Գ. Ն. Խանդամիրեանի թատրոնական դահլիճում տեղի ունեցաւ քաղաքային դպրոցի վարչութեան Գոգոլի յիշատակին նուիրած գրական-երաժշտական առաւօտը, որին ներկայ լինելու համար տպագրված հրաւիրատոմսերով հասարակութիւնից բաւական մարդ էր հրաւիրված։ Աշակերտներից մի քանիսը բաւական աջող կարդացին Գոգոլի գրուածքներից մի քանի հատուածներ։ Առաւօտի ծանրութիւնը ընկած էր նոյն դպրոցի ուսուցիչ պ. Տելենկօյի վրա, որի պատրաստած երգեցիկ խումբը եւ նուագախումբը մեծ բաւականութիւններով։ Նրա մահից յետոյ Բրօսսէն շարունակեց թերի մնացած հրատարակութիւնը եւ տպագրեց յաջորդ 14—21 հատորները, դարձեալ ծանօթութիւններով։

Աւելի բազմաթիւ են Բրօսսէի աշխատութիւնները հայոց պատմութեան եւ հնագիտութեան մասին։ Ամենակարեւորները սրանք են։

Անիի աւերակները (Les ruines d'Ani), երկու մասից բաղկացած (1860—1), 45 վիմագրած նկարներով, որոնք գծագրել էր Կէստնէր ճանապարհորդը։ Այս աշխատութիւնից է վերցրել հ. Ալիշանը իր «Շիրակի» համար Անիի նկարների մեծագոյն մասը։

Ստեփանոս Ուրբէլեանի Սիւնեաց պատմութիւնը, ֆրանսերէն թարգմանութեամբ (Ա. հատոր) եւ յաւելուածներով (Բ. հատոր), 1864—6։

Կիրակոս Գանձակեցու եւ Ուխտանէս Ուռհայեցու պատմութիւնները, ֆրանսերէն թարգմանված, 1870 թ.։

Ժողովածու հայ պատմագիրների (Collection des historiens arméniens), երկու մեծ հատոր, 1874—1876. որոնց մէջ ֆրանսերէն թարգմանված եւ ծանօթաբանված են—Թովմա Արծրունի, Ուռաքել Դաւրիժեցի, Զաքարիա սարկաւագ, Եսայի կաթողիկոսի պատմութիւն Ազուանից, Դաւիթ-բէգի պատմութիւն, Աբրահամ կաթողիկոսի պատմութիւն Նատր շահին, Սամուէլ Անեցի. եւ այս հեղինակների հետ զետեղված է ռուսերէնից թարգմանված Ցիշատակարան մի օֆիցերի, որ ծառայել էր Կովկասում 1835—8 թուականներին։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Մ. ԲՐՕՍՍԷ

Ինչպէս յայտնի է «Մշակի» ընթերցողներին՝ մարտի 2-ին վրաց մէջ գրագիտութիւն տարածող Ընկերութեան նախաձեռնութեամբ Թիֆլիսի կաթոլիկաց ս. Աստուածածին եկեղեցում հոգեհանգիստ կատարվեց հանգուցեալ գիտնական Բրօսսէի համար, նրա ծննդեան հարիւրամեակի առիթով։

Հարկ ենք համարում այս առիթով մի քանի տեղեկութիւններ տալ Մ. Բրօսսէի մասին, որի գրական ընդարձակ աշխատութեան մեծագոյն մասը նուիրված է եղել հայոց պատմական գրականութեան։

Մարիուս-Փելիքս Բրօսսէ բնիկ ֆրանսիացի էր, ծնված Պարիզում 1802 թ. փետրվարի 2-ին։ Սկզբնապէս նա սովորում էր եբրայեցերէն, արաբերէն, չինարէն եւ ծայրագոյն արեւելքի ուրիշ լեզուներ. բայց յետոյ, Սէն-Մարտէնի յորդորանքով, հետամուտ եղաւ հայերէն եւ վրացերէն սովորելու, որոնց գրականութեան էլ նուիրեց իր բոլոր ոյժերը։

Իր հայրենիքում նա չը կարողացաւ ասպարէզ գտնել՝ ցանկացած գիտական աշխատանքին նուիրվելու, եւ նիւթական կարօտ վիճակի մէջ էր։ Բայց 1836 թուականին Պետերբուրգի գիտութեանց ակադեմիան նրան անդամ ընտրեց. ուստի նա տեղափոխվեց Ռուսաստան եւ այստեղ արտադրեց իր բազմաթիւ գրական երկերը։ Վախճանվեց Ֆրանսիայում 1880 թ. սեպտեմբերի 3-ին։ Թողնելով միւս ճանապարհորդութիւնները՝ յիշելու արժանի է նրա ճանապարհորդութիւնը Անդրկովկասում 1847—8 թուականներին, որը նա կատարեց նախկին փոխարքայ իշխան Վօրոնցովի հովանաւորութեամբ՝ գիտական նպատակով։

Նա թողել է խիստ բազմաթիւ աշխատութիւններ, (թւով մօտ 300), որոնց ցուցակը, նրա որդու ձեռքով տպված, ինքն ըստ ինքեան մի լաւ հատոր է կազմում։ Այս աշխատութիւնները, ֆրանսերէն լեզուով, տպվել են Պետերբուրգում գիտութեանց ակադեմիայի հրատարակութիւնների շարքում, կամ առանձին հատորներով, կամ ակադեմիայի տարեգրութիւնների մէջ։ Յիշենք մի քանիսի անունը։

Վրաց պատմութեան վերաբերեալ նրա ամենանշանաւոր աշխատութիւնն է «Վրաց պատմութիւնը» (Histoire de Géorgie), 1849—1857։ Այս գործը ֆրանսերէն թարգմանութիւն է Վախտանգ Ե. թագաւորի 18-րդ դարի սկզբում հաւաքած Վրաց պատմագրութեան կամ Քարթլիս Ցխովրէբայի. թարգմանիչը պատմական նիւթը ճոխացրել է բազմախուռն ծանօթութիւններով ու յաւելուածներով։ Բնագրի թարգմանութիւնը եւ ծանօթութիւնները միասին կազմում են չորս ընդարձակ մեծադիր հատորներ։ Պրոֆէսօր Պատկանեանի վկայութեամբ, որ գրել է քննութիւն Վրաց պատմագրութեան մասին՝ Բրօսսէի այս աշխատութիւնը կազմում է ոչ-մասնագէտների համար՝ Վրաստանի վերաբերեալ պատմական տեղեկութիւնների մի ամբողջ մատենադարան, որ նիւթերի հարստութեան կողմից միակ գիրքն է վրաց պատմական գրականութեան մէջ։ Գլխաւորապէս այս աշխատութեան շնորհիւ է Բրօսսէն ժողովրդականութիւն գրել վրացիների մէջ։ Միւս նշանաւոր աշխատութիւնն է այս մասում Վախուշտ արքայազնի Վրաստանի աշխարհագրութեան թարգմանութիւնը (Description géographique de la Géorgie par Wakhoucht), 1842 թ.։

Ընդհանուր Կովկասի վերաբերեալ աշխատութիւնների մէջ յիշելու է Բրօսսէի «Տեղեկագիրը իր հնագիտական ճանապարհորդութեան մասին Վրաստանում ու Հայաստանում, — որ վերը յիշեցինք։ Գիրքը զարդարված է աշխարհագրական քարտէսով եւ 45 վիմագրած նկարներով։

Ընդհանուր պատմութեան վերաբերեալ գործերից գլխաւորն է Լբբօ'ի հռչակաւոր «Ստորին կայսերութեան (Բիւզանդիայի) պատմութեան նոր հրատարակութիւնը (Lebeau, Histoire de Bas-Empire)։ Այս հրատարակութեան առաջին մասը (1—13 հատորները) կատարել էր նշանաւոր գիտնական Սէն-Մարտէնը 1824—1832 թուերին, Լբբօի պատմութիւնը ճոխացնելով արեւելեան պատմագիրներից, որոնց մէջ եւ հայ պատմիչներից քաղած թանկագին տեղեկութիւններով։ Նրա մահից յետոյ Բրօսսէն շարունակեց թերի մնացած հրատարակութիւնը եւ տպագրեց յաջորդ 14—21 հատորները, դարձեալ ծանօթութիւններով։

Աւելի բազմաթիւ են Բրօսսէի աշխատութիւնները հայոց պատմութեան եւ հնագիտութեան մասին։ Ամենակարեւորները սրանք են։

Անիի աւերակները (Les ruines d'Ani), երկու մասից բաղկացած (1860—1), 45 վիմագրած նկարներով, որոնք գծագրել էր Կէստնէր ճանապարհորդը։ Այս աշխատութիւնից է վերցրել հ. Ալիշանը իր «Շիրակի» համար Անիի նկարների մեծագոյն մասը։

Ստեփանոս Ուրբէլեանի Սիւնեաց պատմութիւնը, ֆրանսերէն թարգմանութեամբ (Ա. հատոր) եւ յաւելուածներով (Բ. հատոր), 1864—6։

Կիրակոս Գանձակեցու եւ Ուխտանէս Ուռհայեցու պատմութիւնները, ֆրանսերէն թարգմանված, 1870 թ.։

Ժողովածու հայ պատմագիրների (Collection des historiens arméniens), երկու մեծ հատոր, 1874—1876. որոնց մէջ ֆրանսերէն թարգմանված եւ ծանօթաբանված են—Թովմա Արծրունի, Ուռաքել Դաւրիժեցի, Զաքարիա սարկաւագ, Եսայի կաթողիկոսի պատմութիւն Ազուանից, Դաւիթ-բէգի պատմութիւն, Աբրահամ կաթողիկոսի պատմութիւն Նատր շահին, Սամուէլ Անեցի. եւ այս հեղինակների հետ զետեղված է ռուսերէնից թարգմանված Ցիշատակարան մի օֆիցերի, որ ծառայել էր Կովկասում 1835—8 թուականներին։

թիւն պատճառեցին հասարակութեան։ Հանդէսը վերջացաւ կէսօրվայ ժամը 2-ին։

Շնորհակալութեան արժանի է պ. Ն. Խանդամիրեան, որը թատրոնական դահլիճը այդ երեկոյ դպրոցների վարչութեան տրամադրութեան տակ էր դրել ձրի։

Վերջացան շատ թէ քիչ մեր մեռած մթնոլորտին կեանք ներշնչող այդ երեկոյթները։ Վաղը մեզ հետ է մեծ պասը ահագին ժամանակամիջոցով։ Իսկ այդ երկար ժամանակամիջոցի ընթացքում մեզ ապասում է մի սարսափելի տաղտուկ կեանք...

Մ. Ղ.

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

—

Փետրվարի 23-ին

Անցեալ անգամ հաղորդել էի, որ մի մսավաճառի մօտ ծառայող, Օլավերթ գիւղացի մի երիտասարդ է անհետացել մեր քաղաքից։ Փետրվարի 13-ին անբախտ Կարապետի դիակը գտան Փարվանա գետի ափին, Կուլիկամ գիւղը տանող՝ Վանքի կամուրջից վերեւ։ Մի քանի օր թշուառ հայրը եւ ազգականները որոնել էին, քանի անգամ անց ու դարձ էին արել այդտեղով, ոչինչ չէր եղել. բայց այդ օրը հանդիպում են գետի դիակին եւ իսկոյն իմաց են տալիս ոստիկանութեանը։ Գլխի վրայի վէրքերից երեւում էր, որ խեղճ երիտասարդը՝ յետեւից խփած՝ կացնի հարուածներով է սպանվել, առանց կուի։ Վէրքերի թիւը հասնում էր 16-ի։ Նոյնպէս երեւում էր, որ սպանելուց յետոյ մարմինը մի քանի օր շարունակ թաղցրած է եղել ձիւնաղբի մէջ, (որովհետեւ մարմնի եւ մանաւանդ վէրքերի վրա աղբ է մնացած եղել) եւ միայն նախորդ գիշերն են բերել, գցել այդտեղ։ Ենթադրում էին, թէ թշուառ երիտասարդը գնացել է, կամ խաբելով տարել են նրան, սպանդանոցի կողմերը, ուր եւ ետեւից հացրած կացնի հարուածներով դաւաճանաբար սպանել է ոճրագործը։

Այս քաղաքի սպանութիւնը կողոպտելու նպատակով չէր կարող տեղի ունենալ, քանի որ խեղճ, աղքատ գիւղացի երիտասարդը կողոպտելու ոչինչ չունէր. վրէժից նոյնպէս չէր կարող լինել, որովհետեւ այդ համեստ երիտասարդը երբէք թշնամի չէ ունեցել։ Այդ է պատճառը, որ ներկայ սպանութիւնը առայժմ մնում է կատարեալ հանելուկ։—Սակայն յուզված ժողովուրդը այս սպանութիւնը համարում է հեռաւեւանք մի ուրիշ յանցանքի—հրձիգութեան, որի միակ ականատես վկան է իբրեւ թէ եղել հանգուցեալը։—Մսավաճառ Մաթուշ Ղեւենեան, որի մօտ ծառայելիս է եղել սպանված Կարապետը, ձերբակալված է քննիչի կարգադրութեամբ։ Պոլիցիան էլ լուրջ կասկածում է նոյն անձնաւորութեան վրա, մանաւանդ որ մսավաճառին պատկանող մի ախոռում կասկածելի հետքեր են գտել։

Ինչպէս ասացի, հասարակութիւնը շատ յուզվեց այդ սպանութեամբ։ Դիակը փողոցով տանելու ժամանակ քաղաքացիների եւ գիւղացիների մեծ բազմութիւն էր ժողովվել, եւ շատերը, ոչ միայն կանանցից, տեսնելով յաղթանդամ, գեղեցիկ եւ ծաղիկ հասակում սպանված երիտասարդի այլանդակված դիակը՝ անիծում եւ արդարադատութիւն էին խնդրում։ Եւ ինչպէս չը յուզվել, տեսնելով այս ժամանակակից «Իսահակի զոհումը», ինչպէս ասում էին ժողովրդի միջից, Իսահակի հետ համեմատելով՝ իբրեւ թէ գործի տարած միամիտ եւ թշուառ երիտասարդին... բայց եթէ նա «Իսահակ» էր, ինչի «հայր Աբրահամի» տեղ մի բարբարոս մարդ էր կանգնած, որ Եհովային խաղաղ ուրացած՝ չար Բահաղին է զոհ բերում... Եւ չը կար մի ձեռք, որ այդ մթութեան մէջ բռնէր ոճրագործի եղբայրասպան ձեռքը եւ ազատէր խեղճ գիւղացուն, հաւատարիմ ծառային...

Մի ծերունի մարդասպանի էլ այսօր բերին Մաճաղիա գիւղից։ Այս թշուառն էլ իր հարսի գլուխն է՝ քար կոտրելու մուրճով ջարդել քնած ժամանակ... թշուառականը շարունակ կրկնում էր—«գլուխը ջարդեցի, կէսը տուի մանչիս, կէսը՝ դրկիցներիս... Անճախ դուռս ու երդիկս հանգստացան»...

Ամէթ եւ նախատինք հայ գիւղացուն, որ ազնիւ աշխատանքի գործիքները—կացինն ու մուրճը—ոճիրների գործիք է դարձնում։ Նոր բան չէ, որ օտար բռնակալի դէմ ոչխար դարձող հայը չատ «զոչաղ է», ստրկային բռնակալ եւ դաժան հալածող է իր եղբօր, քրոջ կամ կնոջ առաջ...

Սալլիմեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, փետրվարի 27-ին

Թոյլ տուէք մի համեստ պատասխան տալ պ. Կարա-Մուրզային, իմ տուած կօնցերտի վերաբերմամբ, որը տեղի ունեցաւ փետրվարի 23-ին։

Հետաքրքիր է, թէ ինչու պ. Կարա-Մուրզան ժողովրդական երգերը իրան է սեփականացնում։ Մթէ, իրաւ, մի գիւտ են ներկայացնում այդ երգերը, որ զարմանում է՝ երբ մէկը բեմ է դուրս բերում այնպիսի երգեր, որ ամեն մի հայ մանկութեան օրից լսում է։

Զարմանալի բան, թէ ինչու երբ ռուսները կամ վրացիք գնում են իրանց ծրագրի մէջ «Спи, младенецъ»-ը, պ. Կարա-Մուրզան լռում է. թող այն ժամանակ էլ գրի, թէ այդ 1885 թուին ինքն է բեմ դրել, որ մինչ այսօր երգվում է։ Կամ վերցնենք միւս երգերը՝ «Կռունկ», «Երազ», «Ահա ծագեց», «Ջան գիւլում», «Մայր Արաքսի» եւ այլն, որոնք յիշված են իմ ծրագրիս մէջ։ Պ. Կարա-Մուրզան սեփականացնում է դրանց առանց մի որ եւ է փաստի։

Պ. Կարա-Մուրզան ասում է, թէ «...երգերը 1885 թուականին, Արծրունու թատրոնում դրել եմ ես բեմի վրա քառաձայն, եւ այն օրից ամեն տարի կրկնում են թէ Թիֆլիսում եւ թէ գաւառներում»։ Դրանով ուզում է ասել, որ այդ երգերը իրան են պատկանում եւ ոչ ոք իրաւունք չունի դնել բեմի վրա. բայց ես կասեմ, որ ամեն մարդ իրաւունք ունի ներդաշնակելու ժողովրդական երգերը եւ բեմ դնելու։

Խումբը բաղկացած էր—գրում է պ. Կարա-Մուրզան—ցուցահանդէսի երգիչներից, (այսինքն իր երգիչներից). բայց մեծամասնութիւնը նորեր էին, եւ բացի այդ՝ սիրող խումբը Կարա-Մուրզայի սեփականութիւնը չէ. նա իրաւունք ունի ամեն տեղ մասնակցելու։ «Խումբը բաղկացած էր մօտ 20—30 հոգուց եւ նրա մէջ առաջի կանանց ձայները չորս հոգի էին», «երկրորդ ձայնը կազմում էին տղայ—ալտոները»։ Խումբը ոչ թէ 20—30 հոգուց էր բաղկացած,—ինչպէս գրում է—այլ 40 հոգուց. կանանց ձայները ոչ թէ չորս հոգի էին, այլ տասներկու. ալտոները ոչ թէ միայն տղաներն էին, այլ խառը, որոնց մէջ երգում էին երեք օրիորդներ, իսկ մնացածները բասսօներ եւ տենօրներ։ Բայց մի թէ խմբի կատարելութիւնը կազմում է ձայների թիւը։

Պ. Կարա-Մուրզան ջանք գործ դրեց իմ կօնցերտը խանգարելու, մարդիկ ուղարկելով ինձ մօտ. բայց նրան չաջողվեց։

Կօնսերվատորիայի ուսանող՝

Ս. Մարտիրոսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երեքշաբթի, մարտի 5-ին, տեղի ունեցաւ Իշխանուհի Բեհբութեանի Թաղումը։ Ցուղարկաւորութեան մասնակցում էր մեծ բազմութիւն։ Վեհափառը խօսեց մի համառօտ ճառ հանգուցեալի եւ նրա տոհմի մասին։

—

Մեզ հաղորդում են, որ երեքշաբթի, մարտի 5-ին, տեղի ունեցաւ Կովկասեան գիւղատնտեսական Ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը։ Նախագահում էր ընկերութեան նորընտիր պատուաւոր անդամ Ի. Ծինամձղվարով։ Ժողովը յարգեց իր հանգուցեալ երկու պատուաւոր անդամների՝ պրոֆեսոր Ա. Սօվետովի եւ գիւղատնտեսութեան տեսուչ Վ. Դէեվսկու յիշատակը՝ ոտքի կանգնելով։ Ընկերութեան քարտուղարի կարդացած տեղեկագրից երեւաց, որ Ընկերութեան գործունէութիւնը 1901 թուին կենտրոնացած էր Կովկասեան ցուցահանդէսի եւ Կովկասեան գիւղատնտեսների համագումար ժողովի վրա։ Այդեղ գործական դպրոցի հոդաբարձու բժիշկ Քանանեան կարդաց դպրոցի գործունէութեան տարեկան տեղեկագիրը։ Իշխան Ի. Անդրոնիկով խօսեց Կովկասեան ցուցահանդէսի եւ նրա արդիւնքների մասին։ Ա. Քալանթար կարդաց մի զեկուցում այն ծրագրի եւ ուղղութեան մասին, որին պէտք է հետեւի Ընկերութիւնը առաջիկայում։ Այնուհետեւ տեղի ունեցան ընտրութիւններ, որոնց արդիւնքը եղաւ հետեւեալը. փոխնախագահ վերընտրվեց Իշխան Պ. Գրուզինսկիյ, խորհրդի անդամ եւ գանձապահ Ա. Եւանգուլով եւ քարտուղար Ի. Իսելեանի։ Նիստին ներկայ էին երեսներկու անդամ եւ բազմաթիւ հիւրեր։

—

Պետերբուրգի գրականագէտների եւ նկարիչների շրջանում, «Аргонавтъ» լրագրի ասելով, միտք է ծագել մի գրական-գեղարուեստական ժողովածու հրատարակել Շամախու երկրաշարժից վնասվածների օգտին։

—

Պետերբուրգից մասնաւոր հեռագիր է ստացված Թիֆլիսում, որ ներքին գործերի մինիստրութիւնը առանց հաստատելու յետ է դարձրել «Հէլիոս» ընկերութեան նախագիծը՝ Թիֆլիս քաղաքը էլեկտրականութեամբ լուսաւորելու վերաբերմամբ։ Ներքին գործերի մինիստրութիւնը նկատողութիւններ է արել նախագծի մէջ։

—

Մեզ հաղորդում են, որ երեքշաբթի, մարտի 5-ին, Թիֆլիսի արքունական թատրոնում դէս եկան երգչուհի Պաօլի եւ երգիչ Պաչինի «Ջիոկոնդա» օպերայում։ Պաօլիի ձայնը դիւրաշարժ, փայփայող ձայներից չէ, բայց կենդանի եւ դրամատիական ձայն է, նա փոխվում է գեղ տրամադրութեան համեմատ եւ ընդարձակ արտայայտութիւն ունի։ Պաչինիի ձայնը ամրակազմ եւ մշակված ձայն է. Երգիչ Ֆերրարին շարունակում է մնալ Թիֆլիսում եւ մասնակցում էր օպերային, ունեցաւ այդ օրը մեծ ջողութիւն։

—

Վլադիկավկազի ճանապարհի վրա կատարվող պօստային երթեւեկութեան կապարառու իր հիմբէկովա միջնորդութիւն է յարուցել ներգործերի մինիստրութեան առաջ, որով թոյլատրութիւն է խնդրում աւտոմոբիլներ բանցնելու այդ ճանապարհի վրա՝ ճանապարհորդների եւ ապրանքների տեղափոխութեան համար։ Աւտոմոբիլների շարժման արագութիւնը ժամում պէտք է լինի 30 վերստ։

—

Այս տարվայ աշնանից, ինչպէս հաղորդում են Պետերբուրգից «Рус. Вѣд.» լրագրին, բեւեռագիտութեան ընկերութիւնը բացում կանանց դասընթացքներ արեւելագէտների ուսումնասիրութեան համար։ Դասընթացքները կը լինեն երկամեայ։

—

Ս. Պետերբուրգ-Ազովեան բանկի մնացորդների մասին լուրեր,—մայրաքաղաքի լրագրների ասելով,—պտտվում էին վաղուց. նրանք ամենայն եւս սաստկացան եւ Պետերբուրգի նենսական շրջանների խօսակցութեան առարկայ դարձան 1901 թուականի վերջում, երբ բանկը յանկարծ ծախեց իր նոր տունը, գտնվում էր Նեվսկի փողոցի վրա։ Մնացորդները հետեւանք է բօրսային խաղի 1896-թուականների ընթացքում, երբ բանկի պարտատոմսերի գիները լցվեց իրանց արժէքը կորցրած ապրանքներով։ Պակասորդ գումարը, լուրերին նայելով, հասնում է մի միլիոն ռուբլու։ Գլխաւոր խնդիրը կը կրէ պետական բանկը։

—

Անցեալ 1901 թուականի ընթացքում առեւտրական նաւատորմը աւելացել է 335 գեշարժ եւ առագաստաւոր նաւերով, որոնց մեծ մասը բանում է Բալտիկ ծովում, իսկ փոքր մասը—Կասպից ծովում։

—

ԴԵՐԲԵՆՏԻՑ մեզ գրում են. «Վարդանանցը մեզ մօտ բոլորովին անհնկատելի անցաւ. Եկեղեցում մաղթանք չեղաւ, մինչդեռ այստեղ բաւական հայեր կան։ Բայց պէտք է տեսնել, թէ ինչպէս է դերբենցին յիշում, որ օրը անուանակոչութիւնը պէտք է տանել։ Անուանակոչութեան օրը մի առանձին կերպ են անում մեզ մօտ։ Առաւօտը գալիս է քահանան օրհնում անուան տիրոջը կամ, եթէ նա մանուկ է՝ մխիթարանք կարդում նրա ընտանիքին, իսկ

Հայ պատմագիրների ժողովածուն ֆրանսերէն թարգմանելու խորհուրդը վաղուց յղացած են եղել Վենետիկի Մխիթարեանները, Այվազեան Գաբրիել վարդապետը եւ եւրոպացի հայագէտներ։ Բայց միայն Վ. Լանգլուային աջողվեց՝ մասամբ իրագործել այս միտքը։ Նուբար փաշայի նիւթական նպաստով եւ բանասէրների ձեռնտուութեամբ նա Պարիզում 1867 եւ 1869 թուերին տպագրեց երկու հատոր այս ժողովածուից (Collection), որի մէջ մտան ֆրանսերէն թարգմանութեամբ Ագաթանգեղոս, Փաւստոս, Լաբուբնա, Զենոբ Գլակ, Յովհան Մամիկոնեան, Կորիւն, Վարք ս. Ներսէսի, Մովսէս Խորենացի, Եղիշէ, Ղազար Փարպեցի եւ Եղնիկ։ Լանգլուայի մահով (1869) գործը կանգ առաւ։ Նրա չարունակութեանը անկեղծ փափաքող էր Բրոսսէն, որ եւ յանձն առաւ մէն մենակ գլուխ բերել այս ընդարձակ ու պատասխանատու գործը, եւ այս նպատակով լոյս ընծայեց վերոյիշեալ երկու հատորները, որոնք միասին 1600 երեսից աւելի են։ Բայց Բրոսսէին էլ չաջողվեց վերջացնել այդ ընդարձակ գործը։

Մենք յիշեցինք Բրոսսէի աշխատութիւններից շատ քչերը, գլխաւորները։ Սրանցից ընթերցողը կարող է դաղափար կազմել, թէ ինչպիսի անխոնջ աշխատաւոր եւ արդիւնաւոր գրիչ է եղել նա։ Եթէ մարդ ակնարկ ձգէ նրա գրական աշխատանքների ցուցակի վրա՝ չի կարողանայ զսպել իր աքանչացումը այդ ահագին գրական աշտարակի առաջ։ Բայց նրա աշխատութիւնները որակութեան կողմից չեն համապատասխանում քանակութեան. եթէ ճիշտ է առածը, որ ասում է «քիչ, բայց լաւ», ճիշտ կը լինի եւ դրա հակառակը—«շատ, բայց վատ», եւ Բրոսսէն իր գրական գործունէութեամբ կատարելապէս ապացուցել է այս։ Նրա մասին խօսող գիտնականները առհասարակ այս կարծիքին են։ Բերենք մի քանիսի վկայութիւնը։ Դիւլօրիէն ասում է. «Աչքէ անց կացնելով աշխատանքների խիստ երկար ցանկը, որոնց տակ Մ. Բրոսսէն ստորագրել է իր անունը, անկարելի է չը զգալ զարմանք, գրեթէ սքանչացում՝ այսպիսի բեղմնաւոր գործունէութեան համար, եւ միեւնոյն ժամանակ չափազանց այն պակասութիւնների պատճառով, որոնք այս բարձր յատկութեան հակադարձ կողմն են կազմում, այսինքն որ նրա մէջ բացակայում են քննադատական ոգին եւ այն յարաբերական կատարելութիւնը, որ ձեռք է բերվում միայն համբերատար ու խոհուն ուսումնասիրութեամբ»։ (Բերված է «Ուսումնասիրութիւնք հայ լեզուի յարեւմուտս» գրքում)։ Ք. Պատկանեանը հետեւեալն է ասում նրա հայ պատմագիրների ժողովածուի մասին. «Լիովին գնահատելով Բրոսսէի ձեռնարկած եւ մասամբ իրագործած աշխատանքի բոլոր դժուարութիւնը՝ այնու ամենայնիւ չենք կարող չը նկատել նրա թարգմանութիւնների խոշոր պակասութիւնները, որոնք խախտում են ընթերցողի հաւատքը դէպի այդ գործը։ Այս պակասութիւնների մէջ գլխաւոր տեղն են բռնում—բնագրի անճիշտ թարգմանութիւնը, հայերէն բարբառների անտեղեկութիւնը, որի պատճառով թարգմանիչը շատ յաճախ բաւականաչափ չէ հասկանում ժողովրդական լեզուի բառերը եւ թիւրքերէնից փոխ առնված դարձուածքները։ Բրոսսէի հրատարակութիւնների պակասութիւնն են կազմում նաեւ անչափ ծանօթութիւնները, որոնց կէսից աւելին անտեղի են, ոչինչ չեն բացատրում, կամ արտատպութիւններ են իր սեփական կամ ուրիշ հեղինակների ծանօթութիւնների, յաճախ առանց աղբիւրը յիշելու»։ (Библіографическій очеркъ арм. исторической литературы, առաջաբան)։ Նոյն գիտնականը մի ուրիշ տեղ (Ванскія надписи, О древней грузинской хроникѣ) մէջ է բերում Գատտէյրասի շատ խիստ կարծիքը Բրոսսէի մասին՝ իբրեւ վրացագէտի, եւ ասում է, թէ Գատտէյրասի դատաստանը Բրոսսէի, իբրեւ լեզուաբանի մասին՝ լիովին յարմարվում է նրան՝ նաեւ իբրեւ պատմաբանի։ «Բրոսսէն պատմաբան չէր, ասում է Ք. Պատկանեան, եւ աւելի քիչ՝ քննադատ։ Իր հրատարակութեան մէջ կուտակելով մեծ քանակութեամբ ծանօթութիւններ ու արտագրութիւններ՝ նա չը բացատրեց Վախտանգի խմբագրած Վրաց պատմութեան մէջ եւ ոչ մի կէտ՝ որ մութ էր մինչեւ իր ժամանակ։ Ցաճախ նա բերում է երկու զանազան աղբիւրներից երկու իրար հակասող տեղեկութիւններ, եւ հնարաւոր է գտնում երկուսի հետ էլ համաձայնել»։—Հ. Ղ. Ալիշանը, չը նայելով որ ինքը Անին չէր տեսել՝ այնու ամենայնիւ «Շիրակի» մէջ նկատում է Բրոսսէի «Անիի աւերակների մասին». «Սա մինչեւ այսօր մինչեւ ճոխ գրուածքն ու նրա գրիչն է Անի մայրաքաղաքին, թէպէտ գրուածքում է արձանագրութիւնների եւ գրանց թարգմանութեան բազմաթիւ սխալներ—Սրանց նման կարծիքներ յայտնել են եւ ուրիշ գիտնականներ Բրոսսէի գրական գործունէութեան գովելի եւ պակասաւոր կողմերի մասին։

Բրոսսէի որդին Լօրան, որ 1887-ին իր հայրի աշխատութիւնների ցուցակը տպեց՝ ի նկատի առնելով գիտնականների կարծիքը՝ այսպէս բնորոշում իր հօր գրական գործունէութեան նշանակութիւնը. «Բրոսսէ ոչ պատմաբան է եւ ոչ լեզուագէտ՝ բառի բուն նշանակութեամբ... Խրթին ու վերացեալ ուսմանց եռանդուն սիրող, անխոնջ ու համբերատար հետազօտող՝ նա բաւական համարեց նուիրել իր կեանքը՝ պատմութեան նիւթեր հաւաքելու, այդ ուսմանց երկիրը մաքրելու պատմական սխալներից, անոնց օգտին ու պիտանի ծառայեցնելով նաեւ զբանասիրութիւնը։ Եվ պայի հայագէտը գիտեն, թէ որչափ օգտակար եղած է իրանց ուսմանց՝ իր ջանքովը բաստված այսպիսի ճոխ ժառանգութիւնը»։ (Ուսումնաս. հայ լեզուի յարեւմուտս)։

Պէտք է միանգամայն համաձայնել Բրոսսէի որդու այս գնահատութեան։

Սա. Մալխասեանց

տոյ անպատճառ սուրճ խմում գնում. տանուտէրը նրան հրաւիրում է երեկոյեան ընթրիքի։ Քահանայից յետոյ գալիս են միւս ծառաները, շնորհաւորում ու ընթրիքի հրաւէրը տանելով գնում։ Երեկոյեան էլ սկսվում է աղմուկ։ Սիւս օրը։ Ծիծաղելի է տեսնել, թէ ինչպէս 2 տարվայ մեռածի անուանակոչութեան օրը գինու բաժակներ են դատարկվում նրա կենացը։

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Փետրվարի 18-ին, երեկոյեան ժամը 7-ին, այստեղ մի յանդուգն աւազակութեան փորձ կատարվեց։ Հինգ Ղուբայեցի թուրքեր՝ նկատելով, որ հարուստ դրամատէր հայ Իվան Բօղդանովը մտաւ իր տունը եւ փակեց դուռը յետեւից, փոքր սպասելուց յետոյ մօտենում են դռանը, սրի ծայրով բարձրացնում են դռան ճեղքից երկաթէ մատը, անկատելի կերպով մտնում են ներս, փակում են ներսից դուռը։ Փոքր սպասելուց յետոյ, նրանցից չորսը դիմակները երեսներին դրած, սրերը հանած մտնում են սենեակները, իսկ հինգերորդ գողը, նոյնպէս դիմակաւորված եւ սուրը հանած, պահպանում է նրա խանութի գործակատար Միրզային, որ դէս ու դէն չը փախչի եւ չը յայտնէ եղելութեան մասին ուրիշներին. իսկ Բօղդանովի կնոջը միանգամայն հանգստացնում են, որ չը վախէ, քանի որ նրան ձեռք չեն տալու։ Փոքր երեխաների ճիչ ու աղաղակին գողերը այնքան էլ ուշադրութիւն չեն դարձնում, վերցնում են նրանց, չը պատում են կողքի նկուղը։ Գողերը մտնում են սեղանատուն այն ժամանակ, երբ Իվանը շրջապատված իր ընտանիքով թէյ էր խմում։ Գողերը պահանջում են նրանից, որ փող տայ։ Նեղը հաւատացնում է, որ մնդուկի բանալին մօտը չէ, այլ միւս սենեակումն է. խնդրում է, որ իրան թողնեն գնայ բանալին բերէ. գողերը այդ բանին հակառակում են եւ պահանջում են, որ նրա կինը գնայ բերէ։ Բայց Իվանը նորից աղերսում է, որ իրան թողնեն, քանի որ նրա կինը երկիւղից լեզուն կոկորդում չորացել է եւ խելք չէ մնացել գլխին։ Գողերը վերջապէս հաճանչվում են. վերցնում են Իվանից ոսկէ ժամացոյցը շղթայով 200 ռուբլի արժողութեամբ։ Իվանը շտապ մտնում է իրա տան դահլիճը, որը մեծ պատուհան ունի դէպի փողոցը, իսկ տունը ցածր է. առանց աղմուկի բացում է պատուհանը, փողոց է թռչում եւ օգնութիւն է կանչում։ Ներսում գողերը՝ լսելով այդ ձայնը, երկիւղից դուրս են փախչում։ Իսկ Իվանը փողոցում շարունակում է սաստիկ գոռալ։ Օֆիցէր Պլէցը, լսելով այդ աղմուկը, հրամայում է ուրեադնիկ Կօտէլնին դուրս գալ իմանալ՝ ինչ-ունն է բանը. սա դուրս է գալիս եւ տեսնում է, որ մէկը, սուրը ձեռին, փախչում է. վրա է հասնում, իրար բռնում են. սուրը թուրքի ձեռից նա խլում է, բայց այդ միջոցին իրա ձեռքը թեթեւ վնասվում է։ Փախչող թուրքը եղել է գողերից մէկը, որ խոստովանվեց գաւառապետին եւ յայտնեց իր ընկերների անունները։ Մինչեւ առաւօտեան ժամը 6-ը գաւառապետը, պրօկուրօրը, քննիչը մարդկանցով քաղաքի մները շրջեցին եւ կալանաւորեցին մնացած չարագործներին էլ»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Մարաղա, փետրվարի 18-ին

Անցեալ տարվայ դեկտեմբերի կէսերում Հրաման եկաւ Ատրպատականի առաջնորդ Մուրադեան վարդապետից այստեղի քահանայի վրա, որ շուտով մարաղացիներից մի ընդհանուր ժողով գումարէ՝ ընտրելու «երկու անաչառ եւ հեղինակաւոր անձինք», որոնք, իր, քահանայի հետ, պիտի կազմեն մի գործակալական մարմին, կառավարելու տեղական հոգեւոր եւ աշխարհային գործերը։

Ժողովը գումարվեց. գաղտնի քուէարկութեամբ ընտրվեցին քաղաքիս ամենահեղինակաւոր երկու անձնաւորութիւններ—պ. Պետրոս Եպիսկոպոսեան եւ Մահտեսի Լալա Տէր-Յակոբեան։ Դատ երեւոյթին գործը վերջացել էր։ Մնում էր միայն այդ ընտրութեան թերթը ուղարկել Թեմականին ի հաստատութիւն։ Բայց այդ թերթը ոչ միայն անյապաղ չուղարկվեց Թաւրիզ Թեմականին, այլ եւ զգուշութեամբ պահվեց նոյն քահանայի մօտ, հակառակ նոյն Թեմականից ժողովի քարտուղար նշանակված տեղիս աւագ ուսուցիչ ոմն ճեմարանական դիպլոմների։ Եւ այդ բոլորի միակ պատճառն այն է, որ այդ ամենայն օրինաւորութեամբ ընտրվածները մեր տէր-բաբայի ուզած մարդիկը չէին. նախկին գործակալը նրա փեսայ Միրզա Աֆթանդիլեանն էր, որ ռուսահպատակ է եւ այստեղի թաջիրբաշի։

Այն հանգամանքը, որ առաջնորդից ոչ մի պատասխան չէր գալիս, եւ տէրտէրի փեսայ Միրզան արդէն ընկել էր գործակալութիւնից, տեղիք տուեց, որ այդ քահանան փաշայական քահանաութիւններ ցոյց տայ։

Հասարակ ժողովուրդը քահանայի ստոր եւ անլուր արարմունքներից զզվելով, միահամուռ հեռագրում է առաջնորդին «մեզ նոր քահանայ»։ Ապա մի ընդարձակ բողոքագիր է գրում նոյն քահանայի դէմ, որի մէջ այդ քահանային յատուկ բազմաթիւ սխրագործութիւններից 4-ը չեշտելով եւ հաստատելով 93 ստորագրութիւններով, առանձին վարձված մի թուրք «զասիդով» (թղթատարով) ուղարկում է Թաւրիզ առաջնորդին՝ յունվարի 15-ին։

Ժողովուրդը դրանով չը բաւականացաւ։ Նա միահամուռ ուխտեց դադարեցնել իր բոլոր գործը, փակել գործարաններն ու խանութները եւ քաշվել մնալ—բաստ նստել—եկեղեցուն կից դպրոցի խորհրդարանում։ Եւ արդարեւ յունվարի 15-ին անմիջապէս կահաւորվեց խորհրդարանը, բերվեցան անկողիններ, նաեւ ուտելիքի պաշար։ Ոչ մի մարաղացի օրերով իր տանը չէ մնում եւ չէ քնում։

Հիմա տեսէք քահանան ինչ բանի է։ Նա գիտէր ժողովրդի բողոքագրի մասին, որովհետեւ բողոքագիրը գրված ու ստորագրված էր բոլորովին աչկարաց։ Փրփրած տէրտէրը, ատամները կրճատացնելով, հանդիպող այս ու այն մարաղացուն ասում է. «Թէ ձեր խանճարը պողպատից է, իմը ալմասից է։ Տեսէք թէ ինչպէս ձեր գրածը ձեր գլխին կը խփեմ»։

Շուտով ներկայանում է առիթը։ Տէրտէրը տուն էր վերադառնում. հանդիպում է նրան օղիով տաքացած ոմն հրացանագործ եւ թախանձում «տէրին» գնալ նրա մօտ թէյ խմելու։ Որքան վերջինը հրաժարվում է, նոյնքան առաջինը նրա թեւից բռնելով պնդում, որ պիտի գաս ու գաս։ «Իմ դռնով անցնես ու չը մտնես իմ տունս թէյ խմելու, չի լինի»։

Մեր տէրտէրը ամենայարմար առիթն է գտնում՝ մարաղեցու հիւրասիրութիւնը մի չարիք դարձնելու նրա գլխին եւ իր վրէժն առնելու մարաղացիներից, յանձին այդ անմեղ հիւրընկալողի։—«Վա՛յ, գոռում է նա փողոցում, մարաղացին ինձ սպանեց, թեւս կոտրեց, փրկեցէք»։ Գալիս տեսնում են, որ նրան ոչնչից ոչինչ չէ պատահել, այնու ամենայնիւ նա իրան «Թիւլքի օլիւմի» տալով, իրան տուն տանել է խնդրում։ Մէջ է ընկնում թաջիրբաշին, տէրտէրի ազգականը։ Թաջիրբաշական մի երկու (արդէն պատրաստված) սրիկաներ, իսկոյն լուր են տանում թաջիրբաշու տղայ Միսակին, թէ տէրտէրին (քեռուդ) սպանեցին։

—Լաւ, ասում է Միսակ խանը, հէնց այդ էինք ուզում։ Հիմա ցոյց կը տանք մարաղցիներին, թէ ում հետ գործ ունեն։—Ռուստամ (թուրք ծառայ), Զաքար, ժամկոչ, ձայնում է խանը. զինվեցէք, վերցրէք նաեւ մահակներ, ուղիղ դէպի Բաղդասարի տունը։

Գալիս են թաջիրբաշականները, անյաղթելիները, եւ ինչպէս կատաղած։ Հանդիպած մարաղեցուն ծեծում ու ծեծել է տալիս թաջիրբաշու տղան փողոցում եւ ծեծում անխտիր։ Ապա մտնում է զինված ծառաներով Բաղդասարի տունը, այն ժամանակ, երբ նա հիւրասիրում էր իր «հաքար» հրացանագործներից մի քանիսին եւ երկու ծանօթ քրդերի։ Առանց իրաւունքի փողոցից մտնում է Բաղդասարի տունը եւ հրամայում ծառաներին. «Դուրս քաշէք Բաղդասարին եւ զարկէք մինչեւ մեռնելը»։ Ծառաները մտնում են սենեակ եւ Բաղդասարին, նրա կնոջ, երեխաների, քուրդ ու հայ հիւրերի առաջ՝ փայտի տակ չորացնում են։ Կինը սկսում է գոռալ, որդիքը սարսափահար այս ու այն կողմն են վազվզում, քրդերն էլ ապշած այս անակնկալ դիպուածից, վերցնում են այնտլունները, որ տեղն ու տեղը հանգստացնեն յարձակվողներին. մի երկու ընիկներ բռնում են նրանց ձեռքից եւ չեն թողնում, ասելով՝ ռուսահպատակ են, ինչ էք անում։ Այս իրարանցման ժամանակ մի կերպ խեղճ Բաղդասարը փախչում մտնում է «ամանդուխանէն»։ Անցնում է մի քանի րոպէ, եւ Միսակ խանը հրամայում է նորից դուրս քաշել խեղճ Բաղդասարին։ Մի կողմից ողորմելու մաղերն են փետում, միւս կողմից փայտի հարուածներով նրա կողերն են ջարդում։ Այդ դեռ ոչինչ։ Թուրք ծառային «ալվաթ» խանը հրամայում է. «Հանի՛ր խանճալդ եւ փորը կոխի՛ր, եւ արիւնագինը կը տամ»։ Արիւնռուչտ ծառան, տիրոջ պատուէրը կատարելու վրա էր, որ յանկարծ հիւրընկալողներից մի քանիսը, որոնք ոչ մի զենք չունեին, ոտքերի տակ տրորեցին նրան։ Ամենայն դէպքում, ինչպէս ասացինք, Բաղդասարի տունը ոչ միայն անյապաղ չուղարկվեց Թաւրիզ Թեմականին, այլ եւ զգուշութեամբ պահվեց նոյն քահանայի մօտ, հակառակ նոյն Թեմականից ժողովի քարտուղար նշանակված տեղիս աւագ ուսուցիչ ոմն ճեմարանական դիպլոմների։ Եւ այդ բոլորի միակ պատճառն այն է, որ այդ ամենայն օրինաւորութեամբ ընտրվածները մեր տէր-բաբայի ուզած մարդիկը չէին. նախկին գործակալը նրա փեսայ Միրզա Աֆթանդիլեանն էր, որ ռուսահպատակ է եւ այստեղի թաջիրբաշի։

Այն հանգամանքը, որ առաջնորդից ոչ մի պատասխան չէր գալիս, եւ տէրտէրի փեսայ Միրզան արդէն ընկել էր գործակալութիւնից, տեղիք տուեց, որ այդ քահանան փաշայական քահանաութիւններ ցոյց տայ։

Հասարակ ժողովուրդը քահանայի ստոր եւ անլուր արարմունքներից զզվելով, միահամուռ հեռագրում է առաջնորդին «մեզ նոր քահանայ»։ Ապա մի ընդարձակ բողոքագիր է գրում նոյն քահանայի դէմ, որի մէջ այդ քահանային յատուկ բազմաթիւ սխրագործութիւններից 4-ը չեշտելով եւ հաստատելով 93 ստորագրութիւններով, առանձին վարձված մի թուրք «զասիդով» (թղթատարով) ուղարկում է Թաւրիզ առաջնորդին՝ յունվարի 15-ին։

Ժողովուրդը դրանով չը բաւականացաւ։ Նա միահամուռ ուխտեց դադարեցնել իր բոլոր գործը, փակել գործարաններն ու խանութները եւ քաշվել մնալ—բաստ նստել—եկեղեցուն կից դպրոցի խորհրդարանում։ Եւ արդարեւ յունվարի 15-ին անմիջապէս կահաւորվեց խորհրդարանը, բերվեցան անկողիններ, նաեւ ուտելիքի պաշար։ Ոչ մի մարաղացի օրերով իր տանը չէ մնում եւ չէ քնում։

Հիմա տեսէք քահանան ինչ բանի է։ Նա գիտէր ժողովրդի բողոքագրի մասին, որովհետեւ բողոքագիրը գրված ու ստորագրված էր բոլորովին աչկարաց։ Փրփրած տէրտէրը, ատամները կրճատացնելով, հանդիպող այս ու այն մարաղեց

իբր թէ արտասահմանի անցագրերի վրա տուրքը պէտք է աւելացնվի։

Բիւլլետէն պրինց Ալէքսանդր Պետրովիչ Օլդէնբուրգսկու առողջական դրութեան մասին. «Երեկ ցերեկը տաքութիւնը բարձրացաւ մինչեւ 38,4, ընդհանուր դրութիւնը գոհացուցիչ լինելով։ Երեկոյեան, վերքը կապելիս, նկատվեց, որ ձախ ականջի մօտ, ներքին ծնօտի մէջ քիչ թարախ է մնացել։ Գիշերը առատ թարախ եկաւ, որից յետոյ խիստ զգալի թեթեւութիւն առաջ եկաւ։ Քունը շատ լաւ էր։ Այս առաւօտ տաքութեան աստիճանն էր 36,8։ Ինքնազգացութիւնը լաւ է. վերքի դրութիւնը լաւ է. թարախը գնում է ազատօրէն, բայց ինֆիլտրացիան (ներածծումը) կակուղ մասերում յամառ կերպով շարունակվում է։ Ցաւեր չը կան».

ԼՕՆԴՕՆ։ Բրիւս Համիլտոն Ինգօտի հովիտում յարձակվեց բօէրների բանակի վրա եւ շրջապատելով՝ բռնեց։ Սպանված են 4 բօէր, վիրաւորված են 6, գերի են առնված 17, որոնց թւում Բօտայի փեսան, գեներալ Խէրրի էմմէդը։

ԲԵՐԼԻՆ։ Մենդելսօն եւ ընկ. բանկային տունը ներկայացրեց Բօրսայի յանձնաժողովին ծրագիր ռուսական նոր, 4%-աբեր փոխառութեան 1902 թ., 393,000,000 մարկի, որը կազմում է Չինաստանի վճարելիք վարձատրութեան Ռուսաստանի բաժինը։

ԱՍԽԱԲԱԴ։ Գիշերը դէպի լոյս մարտի 1, կարկուտ եկաւ սիսեռի մեծութեան. 2-ին եւ 3-ին ձիւն եկաւ։—Ասխաբադով անցաւ դէպի Բուխարա էմիրի չքախումբը, որ տանում է Թագաւոր Կայսրի ընծաները։

ՀՕՆԳՕՆԳ։ Ապստամբութիւնը ծաւալվում է արագ-արագ։ Երեք նահանգներում—Կվանդէի, Գուանտունգ եւ Խունան,—նա տիրապետել է։ Գեներալ Մա, որ Կանդօնից ուղարկված էր զօրքով, երկու օր տեւող կռիւ ունեցաւ ապըստամբների հետ եւ ստիպված էր յետ քաշվել։ Ապստամբները առան Տան-Չինգ, որտեղ հաստատեցին գլխաւոր բանակատեղին։ Մանդարինները սպանված կամ գերի են առնված. քաղաքը աւարված է։—Ապստամբների հետ միացան շատ կայսերական զօրքեր, որպէսզի մասնակցեն աւարառութիւններին եւ պահանջեն ոռճիկի յաւելում։ Ապստամբների պարագլուխն է Գունգմինգ։

ԷԻԿՕՀԱԻԷՆ։ Եկաւ «Deutschland» շոգենաւը, որ բերեց պրինց Հէնրիխին։ Կայսրը շատ սրտագին ողջունեց պրինցին։

ՄԱԴՐԻԴ։ Կաբինէտը կազմակերպվեց։ Մինիստր-նախագահն է Սագաստա, արտաքին գործերի՝ Ալբոտօվար, արդարադատութեան՝ Մոնտիմա, զինուորական՝ Վէյլէր։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Вѣдомости Петербургскаго Градоначальства» լրագրում տպագրված է Պետերբուրգի քաղաքապետի հետեւեալ հրամանը. «Մարտի 3-ին ցերեկվայ 12½ ժամին, Նեվսկի պրոսպէկտում, Սադովայա եւ Կազանսկայա փողոցների մէջ, խիտ հաւաքված հասարակութեան մէջ, որ տօն օրերին տեղի է ունենում այստեղ, մի խումբ երիտասարդներ, գլխաւորապէս ուսանողներ, փորձ արին փողոցային անկարգութիւններ առաջացնել եւ մի քանիսը բաց արին կարմիր դրօշակներ՝ յանցաւոր մակագրութիւններով։ Այս փորձերը հէնց սկզբից զսպվեցին ոստիկանութեան ձեռք առած միջոցներով. բոլոր դրօշակները խլված են եւ նրանց բաց անողները ձերբակալված, ինչպէս եւ անկարգութիւնը առաջացնողների մեծ մասը։ Ի նկատ առնելով, որ բոլոր բռնվածները՝ յամենայն դէպս մեղաւոր են նրանով, որ խախտեցին Պետերբուրգի քաղաքապետի՝ 1901 թ. մարտի 8-ին եւ դեկտեմբերի 9-ին հրատարակած պարտադիր կարգադրութիւնները,—գլխաւոր յանցաւորներին ընդհանուր օրէքների հիման վրա քննութեան ենթարկելուց անկախ,—պարտադիր կարգադրութիւնների զօրութեամբ ես բանտարկութեան ենթարկեցի երեք ամսով հետեւեալ անձերին»։ (Գալիս են անուններ, որոնցից 21 հոգի համալսարանի ուսանող են, 5-ը լեռնային ճեմարանի, 2-ը քաղաքացիական ինժէներների ճեմարանի, 4-ը տեխնոլոգիական ճեմարանի, 4-ը ճանապարհների հաղորդակցութեան ինժէներների ճեմարանի, 2-ը զինուորական-բժշկական ակադեմիայի, 2 ուսանողուհի կանանց բարձրագոյն կուրսերի, 2 ուսանողուհի կանանց բժշկական ճեմարանի, 1 բժիշկ, 1 օգնական երդուեալ հաւատարմատարի, 1 ատամնաբոյժ եւ 42 հոգի զանազան կոչումներից)։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱՆ

5 մարտի

Բօրսայի դիսկոնտը . . . . . 4½—6½ ր.

Պետական 4% բենտան	— 96⅝	»
I Խաղար. տոմսերը	471— —	»
II » »	370— —	»
III » »	302½ —	»
Թիֆլիսի քաղաք. Կրեդիտ. Ընկ. .	— — —	»
Բագուի » » » .	— — —	»
Թիֆլիսի հող. բանկի 5% . .	89¾ —	»
» » » 4½% . .	— — —	»
Բագուի Նաւթ. Ընկ.	411— —	»
Կասպիական Ընկ.	4515 —	»
Մանթաշեան եւ Ընկ.	215 —	»

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՑՈՒՑԱԿ

այն անձերի, որոնք Շուշում նուէրներ են տուել Շամախու երկրաշարժից վնասվածների օգտին։ Հաւաքված 1181 ր. 50 կ.։ Գումարը ուղարկված է Բագուի նահանգապետին։

Ի. Թադէոսեան, Ժամհարեան, Ն. Տէր-Մըկրտչեան—100-ական ր., Տ. Կրասիլնիկեան, Ս. Սարուխանեան, Ս. Իւզբաշեան—50-ական ր.։ տ. Մ. Խաչիեան, Դ. Ներսէսեան—30-ական ր.։ Թ. Խաչիեան, եղբ. Խուրլարեաններ, Ն. Մէլիք-Փաշայեան, Զ. Սարգսեան, N. N., Ն. Ահարոնեան, Ն. Ամբրումեան—25-ական ր., Հ. Ահարոնեան, Ն. Զուրաբեան, Ց. Խաչատրեան, Ճ. Իշխանեան, Մ.-խան Ցովսէփեան—20-ական ր.։ Ց. Զուրաբեան, Գ. Ս. Գրիգորեան, Ա. Այդինեան, Շ., Անյայտ—15-ական ր.։ Ա. Խաչիեան, Ա. Օհանեան, Ն. Եարամիշեան, եղբ. Շահգալդեաններ, Ա. Ղալամեան, Մ. Խունունց, Ա. Քալանթարեան. Բ. Վարունցեան, Բ. Տէր-Սահակեան, Հ. Տէր-Մարտիրոսեան, Թ. Ադամ, (յոյն) Գ. Ս. Ցարութիւնեան, Ց. Զաքարեան, Ց. Աւանէսեան, Հ. Ղալամեան, Ա. Պետրոսեան—10-ական ր.։ Ց. Մակրտումեան, Ճ. Բալայեան, Գ. Տէր-Ցակովբեան, Կ. Շիրեան, Ասրի Ն., Հ. Նուանուսեան, Մ. Մ. Խալափեան, Վ. Եղիեան, Տ. Աւշարեան, Անյայտ, Ս. Ստեփանեան, Մէլիքեան, Հ. Խաչատրեան, Ն. Գափիեան, Ա. Միրզայեան, Հ. Ժամհարեան, Ե. Այդինեան, Ալ. Միրզայեան եւ Հ. Բաբայեան—5-ական ր.։ Դ. Բէկլարեան, Ա. Ցովհաննէսեան, Ն. Գասպարեան, часовой маст. Кости. եղբ. Ա. եւ Ղ. Նուրիջանեաններ, Մ. Փիրջանեան—3-ական ր., К. И. Федоровъ, Գ. Բէջանեան, Ս. Բուրչեան, Բ. Ղարաբէկեան, Ա. Աւանէսեան, Ս. Այդինեան, Մ. Խալափեան, Խ. Ցովսէփեան, Հ. Թիւնիեան, Մ. Աղաբաբեան—2-ական ր.։ Ա. Բալասբէգեան 1 ր. 50 կ.։ Ցովհաննէսեան, Ղ. Սարգիսեան, Մ. Մէլիք-Հախնազարեան, Ա. Տէր-Ցարութիւնեան, Ա. Պողոսեան, Մ. Պետրոսեան, Բ. Ղուլիեան, Կ. Քոչարեան, Գ. Առստամեան, Բ. Քամալեան, Ն. Քամալեան, Զ. Քամալեան. Ն. Ցարութիւնեան, Ս. Ահարոնեան, Մ. Ահարոնեան, Հայրապետ X., Տէր-Մատթէոսեան, եղբ. Ա. եւ Խ. Գասպարեաններ, Ս. Ստեփանեան, Հ. Տէր-Մանուէլեան, Բ. Սարուխանեան, Ս. Բալասբէգեան, Մ. Գ. Թամիրեան, Ս. Ցովհաննէսեան, Կ. Ցովակիմեան, Տ. Մ. Ցակովբեան, Կ. Տէր-Ստեփանեան, Ս. Աթաբէկեան, Ս. Աբաղեան, Ե. Լալաբէկեան, Կ. Օհանբէկեան, Համբարձում եւ Թէվան—1-ական ր.։ Գումարն է 1181 ր. 50 կ.։

ՄՕԶԴՈԿԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ

երկու ձայնաւոր սպասաւոր տիրացուներ։ Բացի արդիւնքից, իւրաքանչիւրն ստանալու է 25 ռուբլի ռոճիկ։

Դիմել՝ Моздокъ. Священнику Шаиняну.

2—4

Լոյս տեսաւ

ԻՒՐԻՑ ՎԵՍԵԼՕՎՍԿՈՒ

армянскій поэтъ

СМѢАТЪ ШАХЪ-АЗИЗЪ

(Քննադատական էտիւդ)

ԳԻՆՆ Է 1 Ր.

Գրքոյկին կցած են՝ Սմբատ Շահ-Ազիզի լուսատիպ պատկերը, «Վեւոնի Վշտի» մի շարք կտորների եւ այլ ոտանաւորների ռուսերէն թարգմանութիւնը։

Ցանկացողները դիմում են հեղինակին հետեւեալ հասցէով. Москва, Леонтьевскій пер., № 11, кв. 17, Юрію (Георгію) Алексѣевичу Веселовскому.

8—10

ԱՐՏԻՍՏԻՐՈՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՕՆ

Շաբաթ, մարտի 9-ին

Դերասան ԱՐՄԵՆԵԱՆԸ

Իր առաջին դերբիւտի համար կը տայ

ՎԱՂԱԺԱՄ ՎՃԻՌ

Կոմեդիա 3 գործող., հեղ. Ալֆրէդ դը Միւսէի։ Տոմսակները վաճառվում են թատրոնի կասայում։

Սկիզբը ժամի 8½-ին երեկոյեան։

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ

մրգատու ծառեր, որոնք ցուցահանդէսի ժամանակ ստացել են ոսկեայ մեդալ, Լագոդէխից, Աֆրիկեանի «Աշխատանք» ընկերութիւնից։ Միքայէլեան փողոց, № 101, պանսիոն Տէր-Ստեփանովի։

2—3

ԵՐԿՐԱՉԱՓ ԻՆԺԵՆԷՐ

Ս. ԲԱՀԱԹՐԵԱՆ

Ընդունում է երկրաչափական եւ հարթաչափական (нивеллировочныя) եւ այլ տեսակ տեղական աշխատութիւններ՝ չուր մատակարարելու, կանալիզացիայի, ոռոգման, ճանապարհների ցամաքացնելու, անտառների բարեկարգութեան, լեռնային գործի, ճանապարհների եւ փողոցների չինութեան եւ կանոնաւորութեան, քաղաքային եւ այլ անշարժ կալուածքների կառուցութեան, յատակագծի վրա գնահատման (оцѣночный сборъ) տուրքի համար, քաղաքային եւ այլ հողերի որոշումը, քաղաքային յատակագծի հաստատելը օրէնսդրական կարգով եւ այլն։

ԲԱԳՈՒ, «Դվորցովայա Նօմէրներ» հիւրանոցում Թիֆլիս՝ Ավճալեան փողոց, Շահրուդեանի տուն, № 59, բակում։

78—10

Ֆրանսիական Շոգենաւային Ընկերութիւն

«ՄԵՍՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ»—«MESSAGERIES MARITIMES».

11/24-ին մարտի մեկնելու է Բաթումից, երեկոյեան ժամը 5-ին, «Memphis» շոգենաւը հանդիպելով՝ Նովորոսսիսկ, Կ. Պոլիս, Դարդանէլ, Զմիւռնիա, Պիրէյ, Մարսէյլ, Հ. Լօնդոն։

Ուղղակի հաղորդակցութեան տոմսակները մինչեւ Պարիզ, նոյնպէս եւ մինչեւ Շ. (Չինաստանում), Վլադիվոստոկ գնացողների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում պ. ցրած գներով։

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին՝ հարկաւոր տեղեկութիւնների համար Ընկերութեան Թիֆլիսի գործակալ պ. Վ. Ցակոբեանին, նախկին Արծրունու գալէրէյում № գրասենեակը. հեռախօս № 608։ Գրասենեակը բաց է 9—1 ժամը ցերեկվայ եւ 5—7-ը կոյեան, բացի կիրակի օրերից։

1—1

ԹԱՏՐՕՆ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

Լոյս տեսաւ 1901 թ. երկրորդ №-ը (գիրք 8-րդ)

ԲԱՑՎԱԾ Է ՆԵՐԿԱՑ 1902 ԹՒԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ (ԳԻՐՔ 9-ՐԴ ԵՒ 10-ՐԴ)

Բաժանորդագին է 3 ր., օտարաքաղաքացիների համար 3 ր. 30 կ., արտասահման 10 ֆր.

Բաժանորդագրութիւնն ընդունվում է հրատարակչի մօտ (Բէքուտովսկայա փողոց, № եւ «Կենտրոնական» ու «Գուտտենբէրգ» գրավաճառանոցներում։

2—3 Հրատարակիչ՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԹԱՐԽԱՆԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

վաճառվում են՝

ԲՈՒԴՈՒՂԵԱՆ Ա. բժ., Կինը եւ տղամարդը Ս. Պ. 1902 թ.—15 կ., Առողջապահական նորատի կանանց—20 կ., Մարմնամարզութիւն (25 պատկերով)—20 կ., Մարմնամարզութեան աղիւսակը (23 պատկերով)—10 կ., Մանկավարժութիւն—մառօտ զրոյցներ—15 կ., Ժառանգականութիւն եւ դաստիարակութիւն—15 կարիք եւ Բարեգործութիւն—15 կ., Ո՞վ է յանցաւորը—15 կ., Գեղձախտ (լոտուխա)—10 կ., Առողջ հոգին առողջ մարմնի մէջ—10 կ., Սիֆիլիս—10 Մեր նեարդերը—10 կ., Վենեական ախտեր—5 կ.։

ԵՐԻՑԵԱՆ ԱԼԷՔՍԱՆԴՐ, Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը եւ Կովկասի Հայք 19-րդ դարում երկու հատոր 4 ր.

» Патріархъ всѣхъ Армянъ Нерсесъ V-й, Князь и княгиня Воронцовы тремъ портретами—3 рубля.

» Ներսէս Ե-րդ կաթողիկոսի կենսագրութիւն, 3 տետր—75 կ.

» Գրիգոր Արծրունին եւ նրա 25 տարվայ գործունէութիւնը—25 կ.

» Վենետիկի Մխիթարանք—1 ր.

» Պատմութիւն 75-ամեայ գոյութեան Ներսիսեան Հայոց Հոգեւոր Դպրոցի, ա. վեց պատկերով—2 ռուբլի։

Դիմել՝ Въ Тифлисъ, въ Центральную Книжную Торговлю. (հ) 2—

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ԼԷՕ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեր կեանքը, գրականութիւնը անցեալում

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

XVIII ԴԱՐ

Առաջին մաս

ԳԻՆԸ 1 ՌՈՒԲԼԻ 50 ԿՈՊԷԿ

Ծախվում է. հեղինակի մօտ, «Մշակի» խմբագրատանը։ Հասցէն՝ Тифлисъ, Редакція Мшака. «Գուտտենբէրգ» գրավաճառանոցում։ Հասցէն՝ Тифлисъ, Книжный магазинъ „Гуттенберг". Նոյն տեղերում ծախվում են նոյն հեղինակութեան ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ մնացած օրինակները։ Գինը 1 ռուբլի 50 կոպէկ։

„Փ. Ն. ՓՐԻԴՕՆԵԱՆ"

ԿՕՆՖԷՏԻ ԵՒ ՇՕԿՕԼԱԴԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Կովկասեան գիւղատնտեսական ցուցահանդէսում մեր պատրաստած ապրանքները ա[illegible] Կովկասում կօնֆէտի արդիւնաբերութեան

ՄԻԱԿ ՄԵԾ ԱՐԾԱԹԵԱՑ ՄԵԴԱԼԻ

Առանձնապէս յանձնարարում ենք. ՌԱՀԱԹ-ԼՕԽՈՒՆ, կարամէլ «ԻՒԲԻԼԷՅՆԱՑՆ» եւ [illegible] բակ բարձր յատկութեան կարամէլներ մրգեղէնով։

Գործարանում աշխատում են մայրաքաղաքի նշանաւոր վարպետներ։

Պատուէրներով դիմել. Թիֆլիս, Պավլովսկայա փողոց, սեփական տուն

Գործարանի հեռախօս № 362, գործարանական խանութինը № 772։

(հ. 4)

27—100

Дозволено Цензурою, Тифлисъ, 6 Марта 1902 г.

Электропечатня Груз. Издат. Т—ва. Б.-Ванкская ул.